ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ANNA GEVORGYAN

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴՐՍԵՎՈՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21-րդ դարում սոցիալ – տնտեսական, քաղաքական զարգացման արագ տեմպերը ուղղակիորեն անդրադառնում են մատաղ սերնդի աշխարհայացքի համակարգության, ինչպես նաև գիտակցության ձևավորման վրա: Դեռահասների անձնային որակները, ձևավորվող ինքնագնահատականն ու դիրքորոշումները համապատասխանաբար փոխակերպվում են հասակակիցների և մեծերի հետ ունեցած միջանձնային փոխհարաբերություններում:

Երեխաների միջանձնային հարաբերությունները դեռահասության տարիքում զարգանում, կատարելագործվում են հոգեբանական առումով բավականին բարդ և դժվար պայմաններում, քանզի այդ հարաբերություններում իրականացվում են ինքնադրսևորման, ինքնահաստատման, ինքնահիրացման և այլ դրսևորումներ: Այս ամենի մեջ հատկապես առանձնանում են իրենց նշանակությամբ երկու տարբեր, սակայն դեռահասների համար կարևոր փոխհարաբերությունների համակարգեր 1. մեծահասակների հետ, 2. հասակակիցների հետ

Բնույթով և բովանդակությամբ իրականացնելով միևնույն ընդհանուր սոցիալականացնող դերը, փոխհարաբերությունների այդ երկու համակարգերը բովանդակությամբ և կարգավորող նորմերով հաճախ կարող են միմյանց նկատմամբ հակադրվել:

Դեռահասի ընդգրկվելը մանկական հետաքրքրությունների շրջանակներից դուրս, նրան դրդում են շրջապատող մարդկանց հետ փոխհարաբերությունների վերանայման, վերակառուցման անհրաժեշտությանը: Տարիքին բնորոշ առանձնահատուկ փոփոխությունների (ինքնադրսևորման, ինքնահաստատման պահանջմունքը, ծայրահեղականությունը, զգայությունն ու զգացմունքայնությունը, սենզիվիտիզմը, տպավորվողականությունը, ըմբոստությունը և այլն) թելադրանքով դեռահասները սկսում են գերագնահատված պահանջներ ներկայացնել իրենց անձի և մեծահասակների նկատմամբ, դիմադրում և ըմբոստանում են, երբ նրանց վերաբերվում են ինչպես երեխաների:

Դեռահասը պահանջում է իրավունքների ընդլայնում՝ մեծահասակների կողմից իրենց ներկայացվող պահանջներին համապատասխան: Որպես հակազդեցություն մեծահասակների կողմից ոչ լիարժեք ըմբռնման, դեռահասի մոտ հաճախ առաջանում են տարբեր տեսակի ըմբոստացումներ, անհնազանդություններ, որոնց ծայրահեղ ձևն է նեգատիվիզմը:

Եթե մեծահասակը հասկանում է դեռահասի ըմբոստության պատճառը և ժամանակին կարողանում է վերանայել հարաբերությունների վերակառուցման գործընթացը, ապա այն ընթանում է առանց դժվարությունների, հակամարտությունների: Հակառակ դեպքում առաջանում են արտաքին և ներքին բախումներ, որոնց մեջ առհասարակ հավասարաչափ ներգրավված են լինում և դեռահասը և մեծահասակը: Ինչպես նշել է Դ.Մայերսը «Իմաստավորելով շրջապատը և իրեն, դեռահասը ընդհանրանում է մեծահասակներին, նրանց նկատողություններին: Դեռահասը ծարավ է ոչ թե պարզապես ուշադրության, այլ մեծահասկների կողմից ճիշտ ընկալման և վստահության» (1): Նա ձգտում է որոշակի սոցիալական դեր ունենալ ոչ միայն հասակակիցների այլև մեծահասակների շրջապատում: Մինչդեռ մեծահասակների շրջապատում առանձին դեպքերում դիտարկվում է դեռահասի սոցիալական ակտիվության զարգացմանը խոչընդոտող չհիմնավորված թյուրըմբռնման դիրքորոշում. նա երեխա է և պիտի ենթարկվի: Արդյունքում կյանքի հենց այս փուլում, երբ դեռահասն ավելի շատ կարիք ունի մեծահասակի կողմից ճիշտ հասկացվելու և անհրաժեշտ օգնության, հաճախ հենց իրենք մեծահասակներն են բաց թողնում երեխայի վրա ազդելու հնարավորությունը: Արդյունքում նրանց միջև աճում է հոգեբանական արգելք, որը ձգտելով հաղթահարել դեռահասը դիմում է ագրեսիվ վարքի:

2011-2012 թթ ընթացքում մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնողների վերաբերմունքը և դաստիարակության ոճը ուղիղ համեմատական է դեռահասի ագրեսիվ վարքի հետ:

Ծնողների վարքի և դրա նկատմամբ դեռահասների վերաբերմունքի հետազոտության արդյունքում պարզվել է, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասներն իրենց ծնողների վերաբերմունքը գնահատում են դիրեկտիվ, թշնամական: Արդյունքների վերլուծությունում դիտարկվում էին նաև սեռային տարբերություններ.

գերագրեսիվ տղաներն իրենց մայրերին գնահատելիս ներկայացնում են ցուցանիշներ, որոնցում գերակշռում է

1. Վրեժխնդրության/թշնամության/ սանդղակը - Տղա դեռահասի նկատմամբ մոր թշնամությունը բնորոշվում է միջանձնային փոխհարաբերություններում մոր կողմից դրսևորված ագրեսիվության և չափազանց խստության մեջ:

Որպես կանոն մոր չափազանց եսակենտրոնացումը, չափազանց ինքնահաստատվածությունը բացառում են երեխայի ընդունումը: Տղան ընկալվում է որպես մրցակից, որին անհրաժեշտ է ճնշել՝ սեփական կարևորությունը հաստատելու համար: Մոր գործողություններում, ինչպես ցույց էին տալիս հետազոտության արդյունքները, հուզական սառնությունը դեռահասի նկատմամբ քողարկվում է և բնութագրվում որպես զսպվածություն, համեստություն, «էթիկետի (վարվելակարգի)» պահպանում և նույնիսկ դրան ենթարկվելիություն: Միևնույն ժամանակ վառ արտահայտված է կասկածամտություն, որդու և շրջապատի մարդկանց նկատմամբ խիստ քննադատություն, որը նկատվում է որպես միջավայրի կողմից դեռահասի նկատմամբ ոտնձգություն, բարոյական սպառնալիք:

2. Հետազոտության ավտոնոմության (ինքնուրույնության)սանդղակը ցույց է տալիս, որ որդու հետ փոխհարաբերություններում մոր ինքնուրույնությունն ընկալվում է որպես իշխանության միանշանակ թելադրանք: Դիտարկվում է նաև այնպիսի միտում, որ մայրը երեխային չի ընկալում որպես ինքնուրույն անձ, ով ունի սեփական մտքեր, զգացմունքներ, պատկերացումներ: Մայրը ներկայանում է «կույր» իշխանության ձգտումների ուժ, որին բոլորը պետք է ենթարկվեն:

Գերագրեսիվ տղաների գնահատականն իրենց հայրիկների նկատմամբ: Այստեղ ևս գերակշռում է՝

1. *ավտոնոմության սանդղակը* - Որդու նկատմամբ հոր ավտոնոմությունը դրսևորվում է դաստիարակության նկատմամբ ձևական վերաբերմունքում, շփման մեջ չափազանց անկողմնակալությունում: Փոխհարաբերությունը հիմնվում է ուժի և դաժանության վրա: Հայրը «նկատում է» որդուն միայն այն դեպքերում, երբ նա «ինչ-որ բան է արել» և կատարած իրադրության ուսումնասիրության համար, չգիտես ինչու, «ժամանակը չի բավարարում»: Հայրը խիստ զբաղված է որդու կյանքի և խնդիրների մեջ ներգրավվելու համար: Դրանց մասին հայրը տեղեկանում է այն ժամանակ, երբ տղան օգնություն է խնդրում և խոհրդի կարիք ունի: Նրան չի հետաքրքրում որդու նախասիրությունները, ծանոթների շրջանակը, առաջադիմությունը դպրոցում: Նա միայն ցույց է տալիս, որ դրանք անհանգստացնում են իրեն: Հաճախ նրան նյարդայնացնում է նաև տղայի իրեն դիմելը: Հոր կարծիքով որդին պետք է ամեն ինչ ինքնուրույն իմանա:

Աղջիկների գնահատականը մոր նկատմամբ ցուցանիշներում գերակշռում են դիրեկտիվության, թշնամանքի սանդղակները: Իրենց մայրերին գնահատելով

դիրեկտիվ - աղջիկ դեռահասները ի նկատի ունեն խիստ և դաժան հսկողություն իրենց հանդեպ: Այդպիսի մայրերը գերադասում են խիստ պատիժը, համառորեն կարծելով, որ իրենք միշտ ճիշտ են, իսկ աղջիկները դեռ փոքր են խնդիրներ քննարկելու համար:

Ավտոնոմության սանդղակի ցուցանիշներում մայրերը գրեթե հոգ չեն տանում երեխայի նկատմամբ, չեն զբաղվում նրանց դաստիարակությամբ, չեն կիսում նրանց զգացմունքները և ապրումները: Այսպիսի հարաբերություններում գերակշռում է օտարացումը:

Աղջիկ դեռահասի գնահատականը հայրերի նկատմամբ ցուցանիշներում գերակշռում է ավտոնոմության և թշնամանքի սանդղակները: Հոր վերաբերմունքը գնահատելով թշնամական՝ դեռահասն ի նկատի ունի այն, որ հարաբերությունների կառուցման այսպիսի ոճը տանում է հոր և աղջկա միջև հուզական կապերի խախտմանը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է լարվածության աճին և դեռահասի անկայունության: Իրենց հայրերին գնահատելով ավտոնոմ՝ դեռահաս աղջիկները նրանց ընդունում են որպես մարդու ում հետ հնարավոր չէ համագործակցել կամ բանակցել,համարելով, որ նա տարանջատված է ընտանիքի խնդիրներից: Համոզված են նրանով, որ հորը չի հետաքրքրում թե ինչ է կատարվում ընտանիքում: Հաճախ նրա գործողությունները հակասում են ընտանիքի կարիքներին և պահանջներին:

Դեռահասի և մեծահասակի միջանձնային կոնֆլիկտի հաղթահարումը հիմնականում նպաստում է նրանց միջև վստահելի, ընկերական հարաբերությունների ստեղծմանը, ինչպես նաև փոխադարձ հարգանքին: Ուստի, ելնելով հետազոտության արդյունքներից, հարկ ենք համարում նշել, որ ագրեսիայի մակարդակը իջեցնելու, հսպառ վերացնելու համար ծնողները պետք է վերանայեն ծնողական վերաբերմունքը, երեխաների նկատմամբ կիրառվող ազդեցության ձևերը, քանզի ագրեսիան ավելի հեշտ է կանխարգելել, քան ավելի ուշ շտկել:

Հասակակիցների հետ հարաբերությունները սովորաբար կառուցվում են հավասար դիրքերի իրավունքով և ղեկավարվում են հավասար իրավունքի նորմերով: Միևնույն ժամանակ, ծնողների և ուսուցիչների հետ փոխհարաբերությունները շարունակվում են անհավասարության սկզբունքով, քանի որ ընկերների հետ հաղորդակցումը դեռահասին տալիս է մեծ հնարավորություններ նրա հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարման գործում:

Ի. Կոնի և այլոց (Լ.Վ.Օբուխովա, Է.Ս.Օտլոգա, Լ.Ռ.Թիլոնովա,Ս.Վ.Ռոդիոնա) աշխատություններում նշվում է, որ տարիքին բնորոշ դեռահասների համար

հասակակիցների խումբը դառնում է ավելի կայուն, նրանցում երեխաների միջև հարաբերությունները սկսում են ենթարկվել ավելի խիստ կանոնների:

Հետաքրքրությունների և խնդիրների համընկնումը, բաց քննարկելու հնարավորությունը, համարձակությունը այն ամենն է, որը գերում է դեռահասին լինելու այդ խմբում, այլ ոչ թե մեծահասակների: Անմիջական հետաքրքրությունների կողքին միմյանց նկատմամբ առաջանում են հարաբերությունների երկու այլ ձևեր, որոնք բնութագրական են կրտսեր դեռահասներին: Դրանք են՝ ընկերական (դեռահասության տարիքի սկիզբ) և մտերիմ (դեռահասության տարիքի վերջ): Սրանք այս տարիքում ունեն կենսական նշանակություն:

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հետազոտությունների արդյունքները, դեռահասի փոխհարաբերություններում առաջնային են ընկերական հարաբերությունները: Նման հարաբերությունների մթնոլորտը հիմնվում է «ընկերական կանոնների վրա», որոնք իրենցում ընդգրկում են այլ մարդկանց անձնական արժանապատվությունն ու հարգանքը, ազնվությունը, ճշմարտախոսությունը, օգնության ձեռք մեկնելու պատրաստակամությունը: Հատկապես դեռահասների խմբերում քննադատության է ենթարկվում եսասիրությունը, ժլատությունը, ուխտադրուժությունը, դավաճանությունը, մեծամտությունը, հրամայելու ոճը, ընկերների կարծիքը հաշվի չառնելու դրսևորումները: Հասակակից դեռահասների խմբերում նման վարքը ոչ միայն մերժվում է, այլև հաճախ առաջացնում է բացասական հակազդումներ: «Ընկերական կանոնները» խախտողի նկատմամբ, հայտարարում են բոյկոտ, չեն ընդունում ընկերական խմբի մեջ, չեն ցանկանում մասնակցել նրա հետ որևէ միջոցառումների: Դեռահասների խմբերը առհասարակ ձևավորվում են լիդերության հարաբերությունների ներքո, որտեղ յուրաքանչյուր դեռահաս ձգտում է արժանանալ լիդերի ուշադրությանը: Դա հատկապես արժեքավոր է այն դեռահասների համար, ովքեր խմբում կայացած չեն: Դեռահասների համար ոչ պակաս հետաքրքիր են մոտ ընկերները, որոնց նկատմամբ կարող են հանդես գալ որպես հավասարազոր կամ էլ լիդերներ: Շահերի և գործերի մեջ հետաքրքրությունների համընկնումը կարևորագույն գործոն է դեռահասների մերձեցման համար: Հատկապես այս խմբի կարևոր գրավչությունն այն է, որ նրանք խոսում և քննարկում են տարբեր իրադրություններ, անձնական խնդիրներ, հասակակիցների և մեծահասակների արարքներ: Այլ կերպ ասած՝ խոսակցության բովանդակությունն իր մեջ ընդգրկում է բազմազան «գաղտնիքներ»:

Ավագ դեռահասության տարիքում երեխաների մոտ հանդիպում են փոխահարաբերությունների երեք տարբեր տեսակներ, որոնք իրարից տարբերվում են մտերմության աստիճանով: Արտաքին, մասնակի «գործնական» շփում-

ները բավարարում են լոկ ակնթարթային հետաքրքրությունները և պահանջմունքները, որոնք խորապես անձնային բնույթ չունեն: Ընկերական հարաբերությունների մակարդակում ընթացող հաղորդակցումը նպաստում է գիտելիքների, հմտությունների, կարողությունների փոխանցմանը: Ձևավորված ընկերական կապերը հնարավորություն են ընձեռում լուծելու որոշակի հուզական անձնային բնույթի խնդիրներ:

Հասակակիցների հետ հաղորդակցման նշանակությունը դեռահասի համար որպես կանոն պակաս կարևոր չեն նրա մյուս գործերից: Ավագ դեռահասը նստակյաց չէ, նրա մոտ դրսևորվում է խմբային կյանքով ապրելու ակնհայտ ձգտում: Դա դեռահասության տարիքին բնորոշ գիծ է և կախված չէ խմբին պատկանելության (աֆիլյատիվ) պահանջմունքի զարգացման աստիճանից: Անբարենպաստ հարաբերությունները ընկերների հետ դեռահասների կողմից ըմբռնվում և ապրվում է շատ ծանր, նույնիսկ որպես ողբերգություն: Ընկերներ ձեռք բերելու, նրանց ուշադրությունը գրավելու համար դեռահասը պատրաստ է ամեն ինչի, նույնիսկ դրա համար նա խախտում է ձևավորված սոցիալական նորմերը, մտնում է բաց կոնֆլիկտի մեջ [3, 276]:

Պարզվում է, որ ավելի ուշ, դեռահասության տարիքի վերջում առաջանում են մոտ ընկեր ունենալու պահաջմունքները, առաջանում են բարոյական հատուկ պահանջմունքներ, փոխադարձ ազնվություն, փոխըմբռնում, գաղտնապահություն, նրբանկատություն և օգնելու պատրաստակամություն: Այս տարիքային փուլի վերջում առաջանում է հետաքրքրություն նաև հակառակ սեռի նկատմամբ: Մեծանում է համակրելի լինելու ձգտումը, որպես դրա հետևանք առաջանում է մեծ ուշադրության դրսևորում սեփական արտաքինի, զգեստի, վարքի ու ոճի նկատմամբ: Սկզբնական շրջանում հակառակ սեռի նկատմամբ հետաքրքրությունը հաճախ դրսևորվում է արտաքինի կարևորման արտահայտությամբ: Տղաները սկսում են այդ ամենը վերագրել աղջիկներին, վերջիններս էլ իրենց հերթին բողոքում են տղաներից: Նման չափազանց մեծ «ուշադրությունն», ըստ երևույթին, երկու սեռերին էլ ակնհայտ հաճույք է պատճառում: Ավելի ուշ փոխվում է միջսեռական հարաբերությունների բնույթը: Ի հայտ է գալիս ամաչկոտությունը, որը երբեմն ուղեկցվում է վարքի մեջ տարօրինակ արտաքին ատրիբուտներով՝ ձևական անտարբերություն, արհամարհական վերաբերմունք և այլն: Այս բոլոր դրսևորումները բնորոշ են այն երեխաներին, որոնք արդեն սովորում են 6-7-րդ դասարաններում: Աղջիկներին սկսում է անհանգստացնել այն հանգամանքը, թե ո՞վ է ում համակրում, ո՞վ և ու՞մ է ինչպես նայում, ո՞վ է ում հետ ընկերանում և այլն:

Տարիքի հետ միջանձնային հարաբերությունները տարբերակվում են. մի կողմից արագ ընդլայնվում են հաղորդակցման եզրերը, աճում է արտադասարանային ընկերների քանակը, մյուս կողմից կատարվում է միջանձնային հարաբերությունների տարբերակում հենց դասարանի կոլեկտիվում: Ինչպես ցույց են տվել Յա.Լ.Կոլոմինսկին և այլք, դեռահասության տարիքում ավելի կտրուկ և լուրջ են դառնում «աստղերի», «մերժվածների» կամ «մեկուսացվածների» դրությունը, (հատկապես բարդ են ու դժվար մերժվածների դրությունը) [7] :

Դեռահասի սոցիոմետրիկական կարգավիճակը կանխորոշող չափանիշները բազմազան են, հետևաբար սոցիալական ընկալումը նույնպես կրում է տարբեր բնույթ: Անկախ նրանից, թե ինչ չափանիշով է կանխորոշվում դեռահասի կարգավիճակը, կոլեկտիվում այն մեծ ազդեցություն է գործում նրա վարքի և ենթագիտակցական ոլորտի վրա: Ինչպես նշում է հեղինակը, հասակակիցների կոլեկտիվում անբարենպաստ դիրքը երբեմն դեռահասի՝ դպրոցից ժամանակից շուտ հեռանալու գլխավոր պատճառներից մեկն է դառնում: Նման դեռահասները ինքնահաստատման չափազանց մեծ ձգտման պատճառով դպրոցից դուրս ընկնում են վատ ազդեցության տակ:

Յա. Լ.Կոլոմինսկին պարզել է դեռահասների մոտ սոցիալական ընկալման մի շարք հետաքրքիր օրինաչափություններ.

1. Ցածր կարգավիճակ ունեցող սովորողների մոտ սոցիոմետրիկական կարգավիճակի, գերագնահատված ինքնագնահատականի և բարձր կարգավիճակ ունեցողների մոտ թերագնահատված ինքնագնահատականի միտում:

2. Եսակենտրոն համահավասարեցում՝ խմբի անդամների կամ սեփական կարգավիճակին հավասար, կամ էլ ավելի ցածր կարգավիճակ ունեցողների մոտ թերագնահատված ինքնագնահատականի միտում:

3. Ռետրոսպեկտիվ օպտիմիզացում՝ նախկին խմբերում սեփական կարգավիճակը ավելի բարենպաստ գնահատելու միտում: Սկսնհայտ է, որ գոյություն ունի նաև հետադարձ կապ: Դժվար դեռահասի մեկուսացվածությունը կարող է լինել ոչ միայն այն պատճառով, որ նա կոլեկտիվից հեռու է կանգնած, անտեսում է նրա նպատակները և վարքի նորմերը, այլև այդ ամենի հետևանք [3. 276]

Հաղորդակցումը դեռահասների ընկալման գործընթացների ձևավորման և դրսևորման կարևորագույն պայմաններից մեկն է: Այն ունի կարևոր հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական նշանակություն դեռահասության տարիքի, ինչպես նաև՝ հետագա ձևավորման համար: Հաղորդակցումը

կարևորվում է հատկապես նրանով, որ այն զարգացող մարդու մոտ (դեռահասի) ճանաչողական հետաքրքրությունների առաջացման, զարգացման և ամրապնդման կարևորագույն գործոններից է: Հատկապես դա վերագրվում է հասակակիցների հետ հաղորդակցմանը [6, 8 -12]: Միջանձնային հարաբերությունների բարձր մակարդակը հնարավոր է միայն կոլեկտիվում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի առկայության դեպքում: Մի հանգամանք ևս. ինչպիսի գործոններով էլ կանխորոշված լինի կոլեկտիվում դեռահասի սոցիալական կարգավիճակը, այն մեծ ազդեցություն է գործում վարքի և ինքնագիտակցության վրա:

Գրականություն

1. Майерс Д. Социальная психология. – М.: Инфра-М., 2001
2. Реан А.А. Психология и психодиагностикаличности. [Текст] / А.А. Реан // СПб.:прайм-ЕВРО-ЗНАК», 2008.-225с.
3. Реан А.А. Психологияподростка. Учебник [Текст] / Подред.А.АРеана - СПб.:прайм-ЕВРО-ЗНАК». 2003.- 480с
4. Рогов Е.И. Настольна книга практического психолога: Учеб.пособие: В 2 кн.- 2-е.- Изд. Центр ВЛАДОС, 1999.-384стр
5. Семенюк Л.М. «Психологические особенности агрессивного поведения подростков и условиягокоррекции: Учебноепособие. Москва, 1998.-96с.
6. Добрович А. Б. Воспитателю о психологии и психогигиенеобщения. Кн. дляучителя и родителей [Текст] / А. Б. Доброви - М. Просвещение, 1987- с.283
7. Межличностныеотношенияподростков[Электронныйресурс] // Режимдоступа:http://www.allbest.ru

The peculiarities of the social perception expressed in the teenagers interpersonal relations

In the present article on attempt has been made to reveal the interpersonal relations of the teenagers with grown-ups and the peers. Reforming the same socializing role these two types of interrelations may oppose to each other with their character and norms and have their influence on the teenagers' social perception, which is described in the article in details.

The results of our experiments have also been included in the article.